Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ԱԶԱՏՎԱԾ Է ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-158-19.10.2017-ՏՀ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկության փոփոխության /լրացման/ հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը /փոփոխությունը, լրացումը/	Առաջարկության վերաբերյալ հեղինակի /հիմնական զեկուցողի եզրակացությունը/	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
ՀՀ Կառավարություն	1-ին հոդված	սույն թվականի հոկտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունել է Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացրած նույնանուն օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, համաձայն որի ԱԱՀ-ից ազատվել է նաև ԱՏԳ ԱԱ 8452 21 000 0 ծածկագրին դասվող ապրանքների (մեքենայական կարի մեքենաներ) ներմուծումը: Մինչդեռ ներկայացված նախագծով առաջարկվում է նշյալ ծածկագրին դասվող ապրանքների ներմուծումը կրկին հարկել ԱԱՀ-ով, ինչն ընդունելի չէ	Ընդունվել է, կատարվել համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	1-ին հոդված	նախագծից հանել ԱՏԳ ԱԱ 6902 ծածկագրին դասվող ապրանքների (հրակայուն աղյուսներ, բլոկներ, սալիկներ և նույնանման հրակայուն կերամիկական շինարարական նյութեր) ներմուծումն ԱԱՀ-ից ազատելու առաջարկությունը, քանի որ ԱԱՀ-ից ազատվող ապրանքների ընտրության ժամանակ	Ընդունվել է, կատարվել համապատասխան փոփոխություն	Ընդունվել է

		անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն դրանք որպես հումք օգտագործելու հանգամանքը, այլ նաև այդ ապրանքները երկրի ներքին տարածքում արտա-դրելու հնարավորությունները,		
ՀՀ Կառավարություն	1-ին հոդված	նախագծի 1-ին հոդվածով կատարվող լրացմամբ սահմանվում են ապրանքների ծածկագրեր, որոնք ազատվում են ԱԱՀ-ից: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշված ծածկագրերով ապրանքները լրացնել նաև գործող օրենքի «Ապրանքների համառոտ անվանումը» սյունակում,	Ընդունվել է, կատարվել համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	1-ին հոդված	Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի ս/թ հոկտեմբերի 25-ին ընդունած վերը նշված օրենքով գործող օրենքի 1-ին հոդվածը երրորդ պարբերությունից հետո արդեն լրացվել է նոր պարբերությամբ:	Ընդունվել է, կատարվել համապատասխան փոփոխություն	Ընդունվել է